"ԷԴԻԹ ՊՐԻՆՏ " ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ "ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ " ՀՈԱԿ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ՝ ԱՆՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպմանառանձնահատկությունները կրթական գործընթացում,1.1Ազգային ծեսը որպես կրթական կամուրջ----------5

1.2 Հայ ազգային տոներն ու ծեսերը----------10

Եզրակացություններ----------16

Գրականության ցանկ----------18

Ներածություն

Թեմայի արդիականությունը. Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգութանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա

երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել ազգային ծեսերը, որպես կրթական կամուրջ
2. Ներկայացնել ազգային տոների և ծեսերի օրինակներ՝ որոնք կարող են կիրառվել կրթական գործընթացում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, որը բաղկացած է երկու ենթահարցերից, եզրակացութնուններ բաժնից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

1.1 Ազգային ծեսը որպես կրթական կամուրջ

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ագային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Դա է հենց պատճառը որ ժողովրդական տոնի հանդիսակարգը պետք է հարազատ լինի կոնկրետ կյանքով ապրող մարդկանց: Ժողովրդական տոնի ժամանակ ոչ թե պետք է ելույթ ունենան «բանահյուսական-ազգագրական» խմբերը, այլ տոնի բոլոր մասնակիցները պետք է ընդգրկվեն այդ «բանահյուսական-ազգագրական» կոչվող երգ ու պարի կաարման մեջ:

Ժամանակների փոփոխությունը, ուբանիզացիան մադրկանց հեռվացրել են ծիսական առօրյայից և հաճախ որոշակի ծեսեր դուրս են գալիս գործածությունից:

Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այսինքն յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը:

Ազգային ծեսերի վերականգման և յուրացման խնդրի լուծումը գտվեց կրթահամալիրում: Տարիներ շարունակ ազգային ծեսերը վերականգնվում և իրականացվում են:

Տոների ընտրության հարցում ուղղորդվում ենք ըստ կրթօջախի տոնացույցից:

Կրթահամալիրում ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում
- ծիսակատարություն:

Ծեսերը բեմականացումներ չեն և երեխաները իրենք են ստեղծում վերաիմաստավորում, խաղում, երգում այդ տոները:

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Սովորողը ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային
- Սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն ու ասիկները
- Սովորողը երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները
- Տեխնոլոգիա դասընթացի շրջանակներում վերականգնում են ծիսական միջավայրը
- Ծիսակարգը ուսումնասիրելիս ծանոթանում տարածաշրջանային առանձնահատկություններին
- Արդյունքում վերականգվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով

Ագային ծեսերի իրագործման հաջորդ քայլը համագործակցային նախագծերն են:

Համագործակցային նախագծերի շրջանակներում տեղի է ունենում հետևյալ գործընթացները՝

- Բլեյան ցանցի տարածում
- Կրթական համագործակցություն տարբեր ուսումնական հաստատությունների հետ
- Ծեսը կատարում է միավորիչ դեր. դրանով իսկ ամրացնում է համագործակցային խմբերի կապը
- Հեռանկարներ է ստեղծում համագործակցության հետագա զարգացման համար

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

Կրթահամալիրում իրականացվող ծեսերը պայմանականորեն կարող ենք բաժանել երկու մեծ խմբի՝ ***հայ ավանդական***, որոնք կրթահամալիրում վերածվում

են ծիսական նախագծերի ու «շրջում» փողոցներով, բակերով, տներով՝ հասնելով մինչև ամենահեռու մարզեր, և ***սովորույթներ***, որոնք վերափոխվել, վերածվել են յուրատեսակ ***սովորույթ-ծեսերի***: Սովորույթը շատ ավելի կապված է առօրյա կյանքի հետ, քան արարողությունն ու ծեսը: Ինչպես ծեսն ու ծիսակատարությունը, կորցնելով իրենց իմաստը, կարող են դառնալ սովորույթ, այնպես էլ այս դեպքում սովորույթը կարող է վերափոխվել ծիսակատարության ու ծեսի:

1.2 Հայ ազգային տոներն ու ծեսերը

ՆՈՐ ՏԱՐԻ (ԱՄԱՆՈՐ)

Նախօրոք պատրաստում ենք «չար-խափաններ» և ընկույզներից բաղկացած ամանորյա բարեմաղթանքներ: Բացի այդ, պատրաստում ենք ***ասիլ-վասիլներ***, երգում ամանորյա ավետիսներ, պարում ազգային պարերգեր, երեխաների հետ ***ընկուզախաղեր կազմակերպում***[1]***:***

Ամանորյա ծեսը մեծ պատկերացում կտա իրական հայկական ազգային ամանորի մասին իր խոհանոցով, ասիլ-վասիլներն՝ իրենց խորհրդով և ուրախ տրամադրությունը՝ երգ ու պարով:

Տրնդեզ կամ Տեառնընդառաջ

Փետրվարի 14-ին, բակում նշում ենք հայկական ավանդական Տեառնընդառաջը:[2] Տեառնընդառաջը Հայ Առաքելական եկեղեցու տերունի և անշարժ տոներից է, որը նշվում է Սուրբ Ծննդից քառասուն օր հետո՝ փետրվարի 14-ին. բայց տոնակատարությունները սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան[3]: Ըստ ավանդույթի, այդ օրը պետք է պատրաստել աղանձ, դրան խառնել քաղցրեղեն, կոնֆետ, ինչպես նաեւ չրեղեն ու ընդեղեն եւ բաժանել արարողությանը ներկա մարդկանց: Տրնդեզի

[1] «Հայկական սովորություններ» Քաջբերունի 1903թ
[2] «Տոնացույց» Ն. Մովսիսյան
[3] «Ազգային տոներ» Ա. Սարգսյան

օրը սովորաբար եկեղեցիների բակում մեծ խարույկ են վառում: Այդ օրը շատ են նաև ամուսնացող զույգերը, ովքեր Աստծո օրհնությունը ստանալուց հետո թռնում են կրակի վրայով:

Կրթական գործընթացում տեխնոլոգիական աշխատանքների կիրառմամբ ազգային տոների և ծեսերի կազմակերպումը հատկապես զարգացնում է սաների մտածողությունը, երևակայությունը: Տեխնոլոգիական գործունեության ժամանակ սաները գործ են ունենում բազմապիսի տեխնոլոգիական նյութերի հետ, ինչն էլ նպաստում է երևակայության և ստեղծագործական մտքի զարգացմանը: Սաները ծանոթանալով տարատեսակ նյութերին՝ թուղթ (հաստ , բարակ, գունավոր), թել (բրդյա, իրիս և այլն..), կտոր (շղարշ, մետաքս, բուրդ, վառ գույներով), տերև, ծաղիկ, փետուր և այլն, իրենք են սկսում հորինել այն կերպարը, որը պետք է պատրաստեն: Այս գործընթացի ընթացքում երեխայի մոտ զարգանում են ոչ միայն երևակայությունը, մտածելու և հորինելու ունակությունները, այլև տեխնոլոգիական հմտությունները:

Տեխնոլոգիան նպաստում է՝

- հինգ զգայարանների զարգացմանը
- ուրախ և ազատ մանկության գաղափարը իրագործելուն

Զարգացնում է՝

- մանր ու խոշոր շարժողական հմտությունները
- ստեղծագործական մտածողությունը
- մեծացնում ու ամրապնդում ինքնահաստատման զգացումը
- զգացմունքների արտահայտման միջոցները

Հայկական ծիսական տիկնիկներ՝ Ուտիս տատը և Պաս պապը, ներքին խորհրդանաշական և իմաստային կապ ունեն միմյանց հետ:

Նրանց ծիսական իմաստն ու դերը ամբողջանում է այն տոների և ծեսերի համալիրում, որտեղ էլ հայտնվում են այս տիկնիկները. Ուտիս տատը՝ Բարեկենդանին, Պաս պապը՝ Մեծ Պասին:

Նախ անհրաժեշտ է պատրաստել և ձևավորել տիկնիկին շատ պարզ միջոցներով: Հարկավոր է սոխ,փայտ,հայկական նախշերով կտոր, կոճակ: Անհրաժեշտ է ձևավորել նաև ձուն գունավոր թելերով: Ուտիս տատը կնոջը կերպարանավորող, գզգզված, քրքրված տիկնիկ է, որ Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր կերպով գլորում էին սարի գլխից, այլ կերպ ասած՝ վռնդում էին՝ ներս հրավիրելով Պաս պապին[4]: Ուտիս տատը խորհրդանշում է կնոջ տիրապետության շրջանը՝ ուտիս օրերը, իսկ Մեծ Պասի ծիսական տիկնիկը՝ ***Ակլատիզը*** կամ ***Պաս պապը***, արական տիրապետության և Պաս օրերի շրջանը: Ուտիս տատը և Պաս պապը գտնվում են մշտական ծիսական պայքարի մեջ: Նրանց վեճն արտահայտվում է Լոռվա բանահյուսության հետևյալ պատառիկի

[4] «Պատկերազարդ տոնացույց» Մ. Ղազարյան, Ա. Համբարձումյան

մեջ՝ *«Տատը գնաց շերեփը ձեռքին, պապը եկավ չոմբախնուսին»*: Սովորաբար տան ամենատարեց կինն էր բոլորից թաքուն պատրաստում Ակլատիզը: Տիկնիկը իրենից ներկայացնում էր մի սոխ *(կարտոֆիլ, խմորագունդ)*, վրան յոթ փետուր խրած, որոնք խորհրդանշում էին Պասի յոթ շաբաթները:

Ղափամայի ծես

Այս ծեսը հատկապես սիրելի է սաների համար, քանի որ շատ «քաղցրահամ ու մեղրանուշ» ծես է: Ամեն մեկն իր հետ բերում է փոքրիկ դդում, ծանոթանում ենք, իմանում, թե ինչ է դդումը, ինչ գույն ունի, ինչ ձև ունի, ինչ համ ու հոտ: Կտրում ենք դդումը, հանում կորիզները, իմանում, թե կորիզներն ինչի համար են, հաշվում ենք, տնկում ենք, որ նորից դդում աճի, իսկ մնացած կտորներով կերպարներ ենք ստանում: Դդումիկներով դուրս ենք գալիս բակ, խաղեր խաղում, գլորում: Գունավոր թղթերը կտրատում ենք, ներկում, սոսնձում կորիզները և ստանում ենք դդմադիմակներ: Կատարում ենք տեխնոլոգիական աշխատանք, դդմանարնջագույն թելերով պատրաստում ենք դդմե գնդիկներ և կախում խմբասենյակի պատուհաններից կամ դռնից: Նաև դդումների վրա ներկում ենք ու սիրուն կերպարներ ստանում՝ էլ՛ տխուր դեմքով, է՛լ ուրախ, է՛լ զարմացած. . .

Եվ, ամենակարևորը, Ղափաման: Դդմի գլուխը կտրում ու հանում ենք կափարիչի նման, փորում ենք, միջուկը հանում, մեջը լցնում բրինձ, չամիչ, չիր, մեղր, կարագ, համեմունքներ ու դնում ջեռոցը՝ այս կարևոր իրադարձությունը համեմելով ուրախ ծիսերգերով: Արդյունքում՝ մի սիրուն, շքեղ, փայլուն ու համող ղափամա: Այս

տարբեր աշխատանքների միջոցով սանի մոտ զարգացնում ենք նախ զգայարանները, կարողանում է համտեսել, իմանալ՝ ինչ համ ունի, ճանաչում է գույնը, ձևը, չափը, կառուցվածքը և այլն:

Սանը տեխնոլոգիական աշխատանք է կարողանում կատարել, ինքնուրույն կտրել, պտտել թելը, փակցնել, սոսնձել. զարգանում է մանր մոտորիկան: Ղափամայի ծեսը նշում ենք Սուրբ Երրորդություն եկեղեցու բակում պատարագից հետո: Մի իսկական գունազարդություն, դդմից համեղ տարատեսակ ուտեստներ ենք պատրաստում, եկեղեցու բակում սիրուն ղափամայացուցահանդես կազմակերպում, ու սկսվում է հյուրասիրությունը:

Այսպիսով, բոլոր վերոնշյալ ծեսերով փորձում ենք զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական երևակայությունը, տարատարիք սովորողների հետ համատեղ խմբային և անհատական հետազոտական աշխատանքներ կատարելու, ուսումնական նախագծեր իրականացնելու, իրար հետ շփվելու, միջհամայնքային, միջմարզային կապեր հաստատելու, իրար ճանաչելու, իրար հետ սովորելու և միասին բազմաթիվ խնդիրներ լուծելու հմտություններն ու կարողությունները, կրթահամալիրի ուսուցման մեթոդներին և միջոցներին:

Եզրակացություններ

Եվ այսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

1. Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Տեխնոլոգիական խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները: Ծեսերի իրականացումը կրթահամալիրում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ճիշտ է, մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն, նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով, կարելի է շատ մեծ արդյունքների հասնել:

2. Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

3. Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Գրականության ցանկ

1. «Հայկական սովորություններ» Քաջբերունի 1903թ
2. «Տոնացույց» Ն. Մովսիսյան
3. «Ազգային տոներ» Ա. Սարգսյան
4. «Պատկերազարդ տոնացույց» Մ. Ղազարյան, Ա. Համբարձումյան